ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ ԷԴԻՍՈՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբյան Ա. Մ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թունյան Վ. Գ.

պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանյան Կ. Վ.

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 24-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ. գ. թ., դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Հայաստանի առաջին Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) պատմության ուսումնասիրումը կարևոր գիտական և արդիական նշանակություն ունի ոչ միայն Առաջին հանրապետության պետական համակարգի պատմության ամբողջացման համար, այլև նրա կուտակած փորձն ու դասերը կարող են օգտակար լինել ներկայիս՝ Հայաստանի երրորդ Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի հաստատման, ժողովրդավարական ինստիտուտների հետագա զարգացման տեսակետից:

Հայաստանի առաջին Հանրապետության ներպետական հիմնախնդիրների մի մասը՝

ա. ՏԻՄ-երի (գավառային և քաղաքային ինքնավարությունների) իրավասությունների և դրանց իրականացման իրավաօրենսդրական ապահովումը,

բ. ՏԻՄ-երի ընտրությունների կատարելագործումը,

գ. տեղական ինքնակառավարման և կենտրոնական իշխանությունների լիազորությունների տարանջատման և նրանց միջև փոխհարաբերությունների սահմանումը,

դ. ՀՀ ամբողջ տարածքում ինքնակառավարման համակարգի իրացումը ներկայումս ներառված են ՀՀ իշխանությունների քաղաքականության օրակարգում: Ուստի, դրանց լուծմանն ուղղված Առաջին հանրապետության իշխանությունների ձեռնարկումները, մշակած ծրագրերն արդիական են, դասառատ և ուսանելի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Ատենախոսության նպատակը ՏԻՄ-երի գործունեության լուսաբանումն է: Ելնելով թեմային առանձնահատկություններից՝ սույն աշխատությունում խնդիր ենք դրել հետազոտել.

- Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում ՏԻՄ-երի ստեղծման հիմնահարցը.
- ՏԻՄ-երի ձևավորման և ամրապնդման ուղղությամբ ՀՀ կենտրոնական իշխանությունների ձեռնարկած միջոցառումները.
- 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության գավառներում ու քաղաքներում ինքնակառավարման մարմինների ընտրությունների՝ նախընտրական, ընտրական, հետընտրական գործընթացները, և դրանց մեջ ներգրավված քաղաքական ուժերի պայքարը.
- ՏԻՄ-երի գործունեությունը, նրանց կողմից ձեռնարկած քայլերը՝ երկրի տնտեսության վերաշինության, համայնքի անվտանգության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և այլ բնագավառներում.

- Կենտրոնական իշխանությունների (խորհրդարանի և կառավարության) և ՏԻՄ-երի փոխհարաբերությունները, խնդիրներ, որոնք առկա են նաև մեր ժամանակներում.
- ՀՀ պետական կառավարման համակարգում ՏԻՄ-երի դերը և նշանակությունը.
- ՏԻՄ-երի օրինակով ցույց տալ Հայաստանի առաջին Հանրապետության ժողովրդավարության մակարդակը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. Մեթոդաբանական առումով ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաքննական և պատմահամեմատական մեթոդներով՝ համադրելով ու վերլուծելով առկա արխիվային նյութերը, հրապարակված սկզբնաղբյուրների, հուշագրությունների, ժամանակի մամուլի, գիտական ուսումնասիրությունների տվյալները: Միաժամանակ հանդես ենք եկել անկողմնակալ դիրքերից՝ առանց քաղաքական ու կուսակցական նախասիրությունների՝ պատմագիտության միակ չափանիշը համարելով ճշմարտությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ. Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է Առաջին հանրապետության ժամանակաշրջանը, այն է՝ 1918 թ. մայիս-1920 թ. դեկտեմբեր: Սակայն, ելնելով հիմնախնդրի ամբողջական ներկայացնելու անհրաժեշտությունից, հարկ եղած չափով անդրադարձել ենք Անդրկովկասում և Հայաստանում ՏԻՄ-երի արմատավորման նախապատմությանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Հիմնահարցի մշակվածության տեսակետից մինչ այժմ հայ պատմագրության մեջ բացակայում է վերոնշյալ խնդիրները հատուկ ուսումնասիրած ու լուսաբանած որևէ ամբողջական ուսումնասիրություն: Այդ տեսակետից սույն աշխատությունն առաջին փորձն է այդ ուղղությամբ: Ատենախոսությունում ներկայացված Առաջին հանրապետության ՏԻՄ-երի վերաբերող տարաբնույթ աղբյուրագիտական նյութերի ու տվյալների զգալի մասը գործնականում հրապարակվում և շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Հենց վերոնշյալ հանգամանքներով են պայմանավորված հետազոտության գիտական նորույթը:

Այսպես՝ լուսաբանվել են կենտրոնական իշխանությունների քայլերը ՏԻՄ-երի ձևավորման և ամրապնդման ուղղությամբ, մասնավորապես՝ վերջիններիս ընտրությունների կազմակերպման և նրանց գործառույթների օրենսդրական ապահովման հարցերը, ՏԻՄ-ի ընտրությունները, արդյունքները, վերջիններիս գործունեությունը, ինչպես նաև վեր է հանվել ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման գործընթացում ՏԻՄ-ի ունեցած դերակատարությունը:

Ատենախոսությունն ունի նաև առօրյա ճանաչողական և կիրառական նշանակություն: Նրանում քննության առնված հարցերը և կատարված եզրահանգումները կարող են օգտակար լինել Հայաստանի երրորդ

Հանրապետության տարածքային կառավարման քաղաքականության իրականացման սկզբունքների ճշգրտման տեսակետից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնում: Աշխատությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության մի շարք դրույթներն արտացոլվել են հեղինակի տպագրած 5 հոդվածներում և գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Աղբյուրագիտական տեսակետից ատենախոսության շարադրանքում օգտագործված նյութերը կարելի է բաժանել մի քանի խմբի՝ ա) արխիվային վավերագրեր, որոնք ունեն առաջնային նշանակություն, բ) ժամանակի պարբերական մամուլ, գ) հրատարակված սկզբնաղբյուրներ, դ) հայ պետական-կուսակցական գործիչների գրքեր, հուշագրություններ, գիտական աշխատություններ և այլն: Օգտագործված նյութերի գերակշիռ մասը Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) տարբեր ֆոնդերում պահվող արխիվային վավերագրերն են, որոնցից հարկ է առանձնացնել հիմնականում Առաջին Հանրապետության շրջանին վերաբերող՝ 105, 198, 199, 201, 214, 307 ֆոնդերի նյութերը: Դրանք իրենցից ներկայացնում են ինքնավարություններին առնչվող (համայնքային խորհուրդների ընտրություններ, ինքնավարությունների գործունեություն, նրանց հետագա ծրագրերը և այլն) պատմական տեղեկություններով հարուստ նյութեր ու վավերագրեր: Մասնավորապես, ՀԱԱ 105, 214 ֆոնդերը համապատասխանաբար մանրամասն տեղեկություններ են հաղորդում Ալեքսանդրապոլի քաղաքային, Վաղարշապատի քաղաքային, Էջմիածնի գավառային ինքնավարությունների մասին: Հարկ է փաստել, որ սույն աշխատության մեջ օգտագործված արխիվային վավերագրերի գերակշիռ մասը հրապարակվում է առաջին անգամ: Սակայն թե՛ պետական, թե՛ ՏԻՄ-երի մի շարք արձանագրություններ ու նյութեր չեն պահպանվել: Հայտնի է, որ 1920 թ. Մայիսյան ապստամբության ընթացքում, ինչպես նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո տարբեր պատճառներով արխիվային նյութերի մի մասը ոչնչացվել է[1]:

Բացի արխիվային փաստաթղթերից՝ ատենախոսության շարադրանքի ընթացքում օգտվել ենք խորհրդային և հետխորհրդային շրջանում հրատարակված տպագիր սկզբնաղբյուրներից՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներից[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 106, թ. 99, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 13:

[2] «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.)», Եր., 1998, «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)» (խմբ. Գ.

Ինչպես արդեն ասվեց, Առաջին հանրապետության ՏԻՄ-երի պատմությունն առանձին հետազոտության առարկա չի եղել որևէ հեղինակի կողմից, ուստի նման թեմայով չկա առանձին աշխատություն: Միայն կարելի է հանդիպել Առաջին հանրապետության պատմության զանազան հարցերով զբաղված հեղինակների, ովքեր հպանցիկ շոշափել են ՏԻՄ-երի խնդիրը:

ՏԻՄ-երի գործունեությանը, նշանակությանը համառոտակի անդրադարձել են ժամանակի այնպիսի պետական-կուսակցական գործիչներ, ինչպիսիք են Ալեքսանդր Խատիսյանը, Սիմոն Վրացյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Կարո Սասունին և ուրիշները[3]: ՏԻՄ-երի արմատավորման գործում առանձնապես մեծ է եղել Ա. Խատիսյանի և Ս. Վրացյանի դերակատարությունը: Ա. Խատիսյանը, խոսելով 1919 թ. մայիսի 23-ին կառավարության կողմից ընդունված գավառային և քաղաքային ինքնավարությունների կանոնադրությունների մասին, գրում էր, որ դրանց հիմքում ընկած էր ինքնակառավարման մարմինների կատարյալ անկախության սկզբունքը[4]: Իսկ ինչպես վկայում էր Ս. Վրացյանը՝ կառավարության նպատակներից էր երկրի ներսում կատարել դեմոկրատական բարեփոխումներ, որոնցից էր գավառային և քաղաքային ինքնավարությունների զարգացման համար անհրաժեշտ իրավակարգի ստեղծումը[5]: Ռուբեն Տեր-Մինասյանը ընդգծում էր զեմստվոների միջոցով ՀՅԴ ազդեցության մեծացման անհրաժեշտության մասին[6]:

Առաջին հանրապետության պատմության առնչությամբ անդրադարձել ենք նաև տվյալ ժամանակաշրջանի դեպքերի ու իրադարձությունների մասնակիցներ Ա. Բաբալյանի, Գ. Չալխուշյանի, Վ. Նավասարդյանի և այլոց աշխատություններին[7]: Առաջին հանրապետության ինքնավարությունների

Գալոյան և Վ. Ղազախեցյան), Եր., 2000, «Արամ Մանուկյան» (խմբ. Ա. Վիրաբյան), Եր., 2009, «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)» (կազմ. Հ. Սուքիասյան, խմբ. Ա. Վիրաբյան, Կ. Խաչատրյան), Եր., 2009, «Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.», (խմբ. Ա. Վիրաբյան), Եր., 2010, «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.-XX դ. սկիզբ)» (կազմ. Ա. Հայրապետյան), Եր., 2011:

[3] Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Պէյրութ, 1968, Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Պէյրութ, 2004, Սասունի Կ., Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները, Բեյրութ, 1968, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, նույնի, Անկախ և միացյալ Հայաստան, Բոստոն, 1920, նույնի, Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 2007:

[4] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 134:

[5] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 459:

[6] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 318:

[7] Չալխուշյան Գ., Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լիներ մեր ուղին, Վիեննա, 1923, Նավասարդյան Վ., Ինչ չէր և ինչ չպիտի լինի մեր ուղին, Կահիրե, 1923, նույնի, Դաշնակցության քաղաքական ուղին, Կահիրե, 1925, Բաբալյան Ա., Էջեր՝ Հայաստանի անկախության պատմությունից, Կահիրե, 1959:

պատմական նախահիմքի ուսումնասիրության տեսանկյունից ուշադրության արժանի են խորհրդահայ հեղինակ Թ. Հակոբյանի, կուսակցական-պետական գործիչ Ա. Մռավյանի, Դ. Անանունի[8], ինչպես նաև՝ Գ. Թումանովի, Վ. Թունյանի, Ա. Շահխաթունյանի, Վ. Գարմիզայի, Գ. Գերասիմենկոյի, Բ. Չիչերինի, Վ. Ֆեդորովի ռուսալեզու աշխատությունները[9]: Թ. Հակոբյանն իր «Երևանի պատմություն»-ը բազմահատոր աշխատության 3-րդ հատորում ներկայացրել է ոչ միայն Երևանի քաղաքային ինքնավարության պատմությունը, այլ նաև հանգամանալից մեկնաբանել է 1870 թ., 1892 թ. քաղաքային կանոնադրությունները, որոնց դրույթների հիմնական մասը հետագայում ամրագրվեց Հայաստանի առաջին Հանրապետության իրավական ակտերում: Վ. Թունյանն իրավացիորեն գտնում էր, որ Երևանի քաղաքային խորհուրդը (1879-1892 թթ.) ոչ միայն հասարակական և պետական մարմին էր, այլ նաև՝ ազգային ներկայացուցչական, որտեղ բարձրացվում և լուծում էին ստանում մի շարք ազգային հիմնախնդիրներ, որոնցից էր, օրինակ, արևմտահայ փախստականների խնդիրները[10]: Ըստ Ա. Մռավյանի՝ Անդրկովկասում համայնքային ինքնավարությունների (զեմստվոներ) ստեղծման խնդրի տապալման հիմնական պատճառը ցարական կառավարության հետադիմական քաղաքականությունն էր: Գ. Գերասիմենկոն գտնում էր, որ ռուս պատմագրության բուրժուալիբերալ ուղղության ներկայացուցիչները ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեսնում էին կառավարման իդեալական համակարգ, որն իր կենսունակությունն ապացուցեց անգամ ցարական ինքնակալության տարիներին[11]:

Հարկ է նկատել, որ ՏԻՄ-երի ձևավորման ուղղությամբ առաջին քայլերն Արևելյան Հայաստանում իրականացվել էին դեռևս վերջինիս՝ ռուսական կայսրության կազմում գտնվելու ժամանակաշրջանում, ուստի վերոնշյալ հեղինակների ուսումնասիրություններն օգտակար են հայ իրականության մեջ ՏԻՄ-երի պատմության վերհանման տեսանկյունից:

---

[8]Մռավյան Ա., Սոցիալիստ-հեղափոխականները Անդրկովկասում, Եր., 1922, Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918 թթ.), Վենետիկ, 1926, Հակոբյան Թ., Երևանի պատմություն (1801-1879 թթ.), հ. 3, Եր., 1959:

[9] Туманов Г. М., Итоги земских совещаний на Кавказе, Тифлис, 1915, Туманов Г. М, Организация земства в Закавказье, Тифлис, 1918, Шахатунянъ А., Административный переделъ Закавказскаго края, Тифлис, 1918, Чичерин Б. Н., Воспоминания. Земство и Московская дума, «Север», М., 1934, Гармиза В. В., Подготовка земской реформы 1864 года, Москва, 1957, Герасименко Г. А., Земское самоуправление в России, Москва, 1990, Федоров В. А., История России XIX-XX вв., Москва, 1998, Тунян В., Русская политика в Армении. Мифы и реалии, Е., 1998, Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX нач. XX вв., Е., 2010.

[10] Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX нач. XX вв., Е., 2010, с. 26, 37:

[11] Герасименко Г. А, Земское самоуправление в России, Москва, 1990, с. 3-4, 238:

Մեր առաջ ծառացած հիմնահարցերի լուսաբանման համար գիտամեթոդական առումով օգտակար են եղել հետխորհրդահայ պատմաբաններ Ա. Ասրյանի, Ս. Բեհբուդյանի, Մ. Կարապետյանի, Ա. Հակոբյանի, Հ. Հարությունյանի, Վ. Ղազախեցյանի, Վ. Վիրաբյանի, Վ. Մելիքյանի, Ա. Մելքոնյանի, Գ. Վարդանյանի, ինչպես նաև սփյուռքահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանի աշխատությունները[12]: Վերոնշյալ հեղինակներն իրենց ուսումնասիրություններում հետապնդել են որոշակի նպատակ և առանձնահատուկ կանգ չեն առել մեր հետազոտության թեմայի վրա: Սակայն նրանք բարձրացրել են փաստական բավականաչափ հարուստ նյութ Անդրկովկասում զեմստվոների ստեղծման հիմնախնդրի, Առաջին հանրապետության խորհրդարանի, կառավարության, նրանց ենթակառուցվածքների, կուսակցությունների գործունեության և առհասարակ հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան հարցերի վերաբերյալ: Դրանք հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմել պետաքաղաքական մարմինների, նրանց քաղաքական տեսլականների, ուղեծրի մասին: Ս. Բեհբուդյանի հրապարակած վավերագրերից մեկում՝ ժողովրդավարության և ինքնավարությունների ջատագով Գյուտ ծայրագույն վարդապետն ինքնավարությունների առավելությունն էր համարում այն, որ վերջիններս, անմիջապես շփվելով համայնքի բնակիչների հետ և իրազեկվելով նրանց կարիքների մասին, հնարավորության սահմաններում փորձում էին լուծել նրանց խնդիրները, որոնցից առաջնայինը, ըստ նրա, կրթական գործունեության ծավալումն էր[13]: Կրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներին է անդրադարձել նաև Գ. Վարդանյանը[14]: Հայաստանի առաջին Հանրապետության տարաբնույթ հարցերի

---

[12] Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997, Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դ. և 20-րդ դ. առաջին քառորդին, Եր., 2003, Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Եր., 2003, Վիրաբյան Վ., Հայաստանի առաջին Հանրապետության միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918-1920 թթ.), Եր., 2003, Վարդանյան Գ., Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Եր., 2003, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Եր., 2005, Ղազախեցյան Վ., Հողային հարցը և հողային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), Եր., 2005, Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., գիրք 1-ին, Եր., 2008, Ասրյան Ա., Արամ Մանուկյան. Կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2009, Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 նոյեմբեր-1918 թ. փետրվար), Եր., 2010, Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., գիրք 2-րդ, Եր., 2012:

[13] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, կազմ.՝ Բեհբուդյան Ս., գիրք Ե, Եր., 1999, էջ 374-375:

[14] Վարդանյան Գ., նշվ. աշխ., էջ 41:

նորովի լուսաբանման տեսակետից շահեկանորեն առանձնանում է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի, և ի մասնավորի, 4-րդ հատորի գիրք 1-ինը, որում մասամբ անդրադարձ կա նաև Առաջին հանրապետության ՏԻՄ-երի պատմությանը՝ վերջիններիս ձևավորումը պայմանավորելով ռամկավար կառավարման համակարգի արմատավորման նկատառումով[15]:

Հետխորհրդային շրջանում պաշտպանված մի շարք ատենախոսություններում անդրադարձներ կան խնդրո առարկա թեմային: Դրանցից են Կ. Ալեքսանյանի, Հ. Զատիկյանի, Ս. Միրզոյանի, Կ. Հայրապետյանի, Հ. Հարությունյանի, Մ. Կիրակոսյանի ատենախոսությունները[16]: Ուշագրավ են Կ. Ալեքսանյանի ատենախոսությունում հրապարակված նյութերն՝ Ալեքսանդրապոլում 1918 թ. մայիսին և 1919 թ. մայիսին ձևավորված քաղաքային խորհուրդների գործունեության վերաբերյալ: Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ, պետական-քաղաքական ճանաչված գործիչ Ա. Խատիսյանի գործունեությանն է անդրադարձել Ս. Միրզոյանը: Վերջինս, ուսումնասիրելով Ա. Խատիսյանի կյանքը և գործունեությունը, նրան համարել է ոչ միայն մասնագետ-բժիշկ, այլև՝ եվրոպական չափանիշներով քաղաքային ինքնակառավարման գործի գիտակ: Ա. Խատիսյանը, 1902 թ. Թիֆլիսի քաղաքային ինքնավարությունում՝ խորհրդում ու վարչությունում զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ, իսկ 1910-1917 թթ. ընտրվելով Կովկասի փոխարքայության կենտրոնի քաղաքագլուխ[17]՝ լիովին գիտակցում էր հասարակական կյանքում տեղական ինքնակառավարման մարմինների անհրաժեշտությունը: Ա. Խատիսյանի կուտակած փորձը, անշուշտ, օգտակար պետք է լիներ Առաջին հանրապետությունում: Ա. Խատիսյանը գտնում էր, որ պետական շինարարության գործում մեծ դեր է վերապահված զեմստվային և

---

[15] Հայոց պատմություն (խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., խմբագրակազմ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշ.), հ. IV, գիրք 1, Եր., 2010, էջ 35:

[16] Զատիկյան Հ., Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920 թթ. (պետական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի հիմնական հարցերը), Եր., 1996, Ազգային գրադ. 07.00.00, Միրզոյան Ս., Ալեքսանդր Խատիսյան (կյանքը ու գործունեությունը), Եր., 2001, Ազգային գրադ., ատեն. բաժին, 07.00.01, Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառը 1918 թ. դեկտեմբեր-1921 թ. ապրիլ, Եր., 2005, Ազգային գրադ., ատեն. բաժին, 07.00.01, Բաբաջանյան Վ., Միջկուսակցական հարաբերությունները 1918-1920 թթ., Եր., 2006, Ազգային գրադ., ատեն բաժին, 07.00.01, Հայրապետյան Կ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. հունիս-1919 թ. մայիս), Եր., 2006, Ազգային գրադ., ատեն. բաժին, 07.00.01, Հարությունյան Հ., Քաղաքական գործընթացները և իշխանություն-հասարակություն հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), Եր., 2009, Ազգային գրադ., ատեն. բաժին, 07.00.01, Կիրակոսյան Մ., Պետական և հասարակական հաստատությունների որբախնամ գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում, Եր., 2011, Ազգային գրադ., ատեն բաժին, 07.00.01:

[17] Միրզոյան Ս., նշվ. աշխ., էջ 20-23:

քաղաքային ինքնավարություններին[18]: Ուստի նրա՝ վարչապետի պաշտոնակատարի, ապա վարչապետության շրջանում տարբեր գավառներում և քաղաքներում համայնքային ու քաղաքային կանոնադրությունների կիրառման մասին ընդունվեցին, և հաստատվեցին բազում օրենքներ:

Այդ օրենքներին, ինչպես նաև Էջմիածնի գավառային ինքնավարության գործունեությանն է մասնակիորեն անդրադարձել Հ. Զատիկյանը: Սակայն, հարկ է նշել, որ նրա ներկայացրած նյութերը հասկանալի պատճառներով բավականին աղքատիկ են, իսկ կատարված եզրակացությունները՝ թերի: Հ. Զատիկյանը գտնում էր, որ երկրի ծանր ֆինանսական վիճակից ելնելով՝ ինքնավարությունները չստացան գործելու լիարժեք հնարավորություն[19]: Տեղական ինքնակառավարման գործառույթների մասին ուշագրավ տեղեկություններ կան Կ. Հայրապետյանի ատենախոսության մեջ: Հասկանալի է, որ հեղինակն ինքնակառավարման ոլորտին անդրադարձել է զուտ գաղթականության խնդրի կապակցությամբ: Վերջինս ներկայացնում է գաղթականական գործի կազմակերպման երկու մոտեցումներ: Ըստ որի՝ այդ գործընթացը կարելի էր կազմակերպել՝ ստեղծելով գաղթականական առանձին վարչակազմ, սակայն ընտրվեց մյուս տարբերակը. գաղթականական գործը տեղերում հանձնվեց գավառային և քաղաքային ինքնավարություններին և, ինչպես նշում է հեղինակը, «հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման հետ մեկտեղ դրանց էր հանձնվում գաղթականական գործի իրականացումը»[20]:

ՏԻՄ-երի ձևավորման և գործունեության լիարժեք լուսաբանման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ժամանակաշրջանի պարբերական մամուլում հրապարակված նյութերը: Հայաստանի Հանրապետության պետական շինանարության՝ այդ թվում ինքնավարությունների ձևավորման (իրավասուների ընտրությունների, միջկուսակցական պայքարի, խորհուրդների, վարչությունների պաշտոնյաների ընտրությունների), դրանց գործունեության մասին անդրադարձել են հանրապետությունում լույս տեսնող մի քանի տասնյակի հասնող պաշտոնական և ոչ պաշտոնական թերթեր: Ինքնավարությունների մասին հատկապես հարուստ տեղեկություններ են հաղորդում ՀՅԴ պաշտոնական օրգան «Յառաջ»-ը, ՀԺԿ-ի «Ժողովուրդ», էսէռների «Սոցիալիստ-հեղափոխական» թերթերը, որոնց էջերում հրատարակվել են ինքնավարություններին վերաբերող բազմաբովանդակ նյութեր, տեղեկանքներ, հաղորդումներ ու հոդվածներ: Ընդդիմադիր մամուլը՝ «Խոսք», «Կայծ», «Մարդկայնություն», «Հայաստանի ձայն», «Սոցիալիստ-հեղափոխական» և այլն, քննադատության թիրախ են դարձրել հիմնականում դաշնակցականներից բաղկացած համայնքային մարմինների գործունեությունը՝

---

[18] Զանգ, 1 հունվար, 1919:

[19] Զատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 62:

[20] Հայրապետյան Կ., նշվ. աշխ, էջ 59-60:

միաժամանակ չժխտելով վերջիններիս անհրաժեշտությունը: Պարբերական մամուլում ավելի ուշ՝ 1920-1930-ական թվականներին, տեղական ինքնակառավարման մարմինների պատմությանը հուշագրության ձևով անդրադարձան Ա. Խատիսյանը, ով «Հայրենիք» ամսագրում տպագրեց «Քաղաքապետի մը հիշատակները»[21], Ա. Խոնդկարյանը՝ «Վէմ» ամսագրում «Օպոզիցիան հանրապետական Հայաստանում» հոդվածաշարերը[22]:

Հետխորհրդային շրջանում ինքնավարությունների խնդրին հոդվածների ձևով անդրադարձել են Կ. Ալեքսանյանը, Վ. Մելիքյանը և ուրիշներ[23]:

Վերը նշված աղբյուրների և գրականության համալիր ուսումնասիրությունը և քննությունը լայն հնարավորություն են ընձեռել համալիր հետազոտել ու ամբողջացված ներկայացնել Հայաստանի առաջին Հանրապետության ՏԻՄ-երի համակարգված պատմությունը: Սակայն հարկ է ենք համարում կրկին շեշտել, որ մեր թեմային վերաբերող հիմնական տեղեկատվության արժանահավատ աղբյուրը հանդիսացել են Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերը, իսկ տպագիր աղբյուրները և պատմաշրջանի պարբերական մամուլն ավելի շատ ունեցել են օժանդակ նշանակություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ներկայացվող ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից՝ համակարգչային շարվածքով 176 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնականում հիմնավորվում է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ներկայացվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ **«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1918-1920 ԹԹ.)»**, բաղկացած է 3 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ», անդրադարձ է կատարվում ցարական

---

[21] Խատիսյան Ա., Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք», Բոստոն, 1932, N 10 (օգոստոս), էջ 97-106, N 1 (նոյեմբեր), էջ 133-142:

[22] Խոնդկարյան Ա., Օպոզիցիան հանրապետական Հայաստանում, «Վէմ», Փարիզ, 1934, թիվ Զ, էջ 73-135:

[23] Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2009, N 2, էջ 123-125:
Մելիքյան Վ., Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը երկրամասի վարչական սահմանաբաժանումների և զեմստվոների հարցում, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2009, N 3, էջ 61:

Ռուսաստանի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությանը, մասնավորապես ՏԻՄ-երի վերաբերյալ օրենքներին, դրանց բնույթին, հետևանքներին: Լուսաբանվում է Ժամանակավոր կառավարության և Անդրկովկասյան կոմիսարիատի ձեռնարկած քայլերը՝ Անդրկովկասում տեղական ինքնակառավարման համակարգի արմատավորման ուղղությամբ և դրանց ձախողման պատճառները[24]:

Երկրորդ ենթագլխում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ», ցույց է տրված ՀՀ պառլամենտում ներկայացված կուսակցությունների դիրքորոշումը ՏԻՄ (ինքնավարություններ) համակարգի կարևորության հարցի շուրջ, Հայաստանի խորհրդի գործունեությունը՝ ՏԻՄ-երի կազմակերպման և ամրապնդման ուղղությամբ: ՏԻՄ-երի ընտրությունների անցկացման, համապատասխան օրինագծերի մշակման, օրենքների նախագծերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություն տալու համար խորհրդարանում ձևավորված Ինքնավարությունների մշտական հանձնաժողովի աշխատանքները: Չնայած 1918 թ.–ից մինչև 1919 թ. առաջին կեսն ինքնավարությունների ստեղծման մասին օրինագծերը չդարձան Հայաստանի խորհրդի օրակարգային հարցեր, սակայն օրենսդիր մարմնում քննարկվեցին ՏԻՄ-երին առնչվող բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում էին Երևանի քաղաքային ինքնավարության գործունեության, բնակարանային հարցի լուծման, կրթական կյանքի կազմակերպման ոլորտներին[25]:

Անդրադարձ է կատարվել խորհրդարանի՝ միլիցիան ՏԻՄ-երի ենթակայությանը հանձնելու ուղղությամբ ձեռնարկած միջոցառումներին: 1920 թ. ապրիլի 21-ին «Միլիցիայի մասին» օրենքով այն դրվեց ՏԻՄ-երի անմիջական տնօրինության տակ (հոդված 2)[26]:

Լուսաբանվել են խորհրդարանի քննարկումները դեռևս 1918 թ. փետրվարին ձևավորված Դիլիջանի գավառային ինքնավարության օրինականության, ինքնավարության կենտրոնի տեղորոշման հարցերը: Կարևորելով պետական դրամական օժանդակության քաղաքականությունը՝ ներկայացվել է խորհրդարանի կողմից հաստատված փոխառությունների մասին մի շարք օրենսդրական ակտեր[27]:

Վեր է հանվել ՏԻՄ-երի դերակատարությունն իշխանության օրենսդիր և դատական մարմինների կայացման գործում: Այսպես՝ 1919 թ. մարտի 31-ին

---

[24] Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Եր., 2010, էջ 134-135:

[25] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 122, թ. 156, ֆ. 201, ց. 1, գ. 118[2-դդ], թ. 160, ֆ. 207, ց. 1, գ. 88, թ. 33:

[26] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Եր. 1998, էջ 262-263:

[27] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 21, Հառաջ, 9, 17 մարտ, 1920:

ընդունված «Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքի համաձայն՝ խորհրդարանի ընտրությունների կազմակերպման աշխատանքները համակարգող ընտրական հանձնաժողովների մեջ ընդգրկվելու էին ՏԻՄ-երի ներկայացուցիչներ: Հաշտարար դատավորների ընտրությունները ևս համարվում էր ՏԻՄ-երի լիազորությունը [28]:

Երրորդ ենթագլխում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ», անդրադարձել ենք կառավարության կողմից ընդունված այն կարևոր որոշումներին և օրենքներին, որոնց հիման վրա հայ իրականության մեջ ձևավորվեց տարածքային իշխանության կարևոր օղակներից մեկը՝ ՏԻՄ-երը: Դրանք հիմնականում վերաբերվում էին ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման մասին օրենքների ընդունմանը, գործադրման ընթացքին, արդյունքներին, ինքնավարություններին տրվող պետական հատկացումներին, ՏԻՄ-երի վերաբերյալ օրենքների բարեփոխմանը, գավառային և քաղաքային ինքնավարությունների իրավասությունների ընդարձակմանը, քաղաքապատկան հողերի, գույքի վերագնահատմանը, բնակարանների բռնագրավմանը, տարբեր ընկերությունների մունիցիպալացմանը և այլն:

Այսպես՝ 1919 թ. մայիսի 23-ին հաստատվեց երկու կարևոր օրենք՝ «ՀՀ մի քանի գավառներում զեմստվոյական հաստատություններ հիմնելու մասին» և «ՀՀ մի քանի վայրերում քաղաքային կանոնադրություն մտցնելու մասին»[29], որոնց կիրառմամբ ՀՀ մի շարք գավառներում և քաղաքներում ձևավորվեցին ՏԻՄ-եր, իսկ 1920 թ. հունիսի 5-ին կառավարության կողմից ընդունված «Նախարարությունների որոշ ֆունկցիաները գավառական ինքնավարություններին հանձնելու մասին» օրենքի համաձայն՝ ընդարձակվեցին վերջիններիս լիազորությունները[30]:

Այս բաժնում հարկ ենք համարել ներկայացնել Երևանի քաղաքագլուխ Մկրտիչ Մուսինյանի՝ քաղաքների կառավարման մասին տեսլականը, որը հենվում էր քաղաքային ինքնավարությունների ապակենտրոնացման սկզբունքի վրա:

Անդրադարձել ենք նաև ՆԳՆ դերակատարությանը՝ ՏԻՄ համակարգի ձևավորման և ամրապնդման ուղղությամբ[31]:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԳԱՎԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ», բաղկացած է 3 ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ

---

[28] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 6, թ. 23, գ. 221, թ. 49 շրջ, 50:

[29] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքներ (1918-1920 թթ.), Եր., 1998, էջ 79-84:

[30] ՀԱԱ, ֆ. 214, ց. 1, գ. 21, թ. 31-32:

[31] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 14, թ. 3, գ. 92, թ. 9, 19:

ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ», ներկայացված է Էջմիածնի գավառի ինքնավարության մարմինների ձևավորման գործընթացը, մասնավորապես ընտրական հանձնաժողովի աշխատանքները (ընտրացուցակների կազմում, քվեաթերթիկների, քվեների հաշվառում, արդյունքների հրապարակում և այլն)[32], գավառային խորհրդի և վարչության ղեկավար պաշտոնների ընտրությունները[33], դրանց շուրջ ծագած քաղաքական ուժերի միջև առկա հակասությունները:

Ատենախոսության սույն ենթագլխում լուսաբանված է և՛ գավառային խորհրդի, և՛ գավառային վարչության գործունեությունը, որոնք ներառում էին սոցիալ-տնտեսական մի շարք ոլորտներ՝ կրթություն, բժշկություն, վիճակագրություն, աղբահանություն, անվտանգություն, կենսամթերքների բաշխում, սակագների նշանակում, տուրքերի գանձում և այլն[34]:

Անդրադարձ է կատարված նաև գավառային ինքնավարությունների իրավասությունների ընդարձակմանն ուղղված գավառային ինքնավարության ձեռնարկած քայլերին, իրենց իրավասության մեջ չմտնող, սակայն պետության կողմից պատվիրակած լիազորությունների կատարմանը՝ մասնավորապես դասալքության դեմ պայքարին:

Երկրորդ ենթագլխում՝ «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ», ներկայացված է Երևանի գավառային ինքնավարության մարմինների ձևավորման գործընթացը, վերջիններիս ձեռնարկած միջոցառումները սոցիալ-տնտեսական բնագավառում: Համամասնական սկզբունքով կազմակերպված ընտրությունների արդյունքում ՀՅԴ ցուցակից ընտրվել էր 37 իրավասու, էսէռների և Անկուսակցականների գյուղացիական դաշինքից՝ 5 իրավասու: Գավառային խորհրդի նախագահ ընտրվեց Վ. Խորենին (ՀՅԴ), վարչության նախագահ՝ Հովի. Թադևոսյանը[35]:

Գյուղատնտեսության նախարարության համաձայնությամբ գավառային վարչությանը վստահվեց ՀՀ տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող բամբակի ցանքսի կազմակերպչական աշխատանքները: Տվյալներ են բերվում, որ մինչև 1920 թ. մայիս Երևանի գավառում ցանվել էր 2245 փութ և 20 ֆունտ բամբակի սերմ[36]:

Բերված են նաև այլ տվյալներ, որոնց համաձայն՝ ՏԻՄ-ի նախաձեռնությամբ և պետական օժանդակությամբ գավառում բացվել են բժշկական կայաններ, սննդակայաններ և կենսական նշանակության այլ

---

[32] Նույն տեղում, գ. 241, թ. 4, 15:

[33] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 255, թ. 13, ֆ. 214, ց. 1, գ. 41, թ. 81:

[34] ՀԱԱ, ֆ. 214, ց. 1, գ. 52, թ. 23, 63:

[35] Հառաջ, 5 մարտ, 1920:

[36] Նոր աշխատավոր, 29 ապրիլ, 1920, Հառաջ, 15 մայիս, 1920:

հաստատություններ[37]: Թեև դրանց թվաքանակը բավարար չէր, սակայն դրանով հնարավոր է եղել քիչ թե շատ մեղմել սոցիալական տագնապալի իրավիճակը:

Երրորդ ենթագլխում՝ «ԴԻԼԻՋԱՆԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», լուսաբանված են վերոնշյալ գավառների ՏԻՄ-երի ձևավորումը և գործունեությունը: Ցույց է տրված, որ այս գավառներում, մի շարք հանգամանքներով պայմանավորված (սոցիալ-տնտեսական ծանր դրություն, ներկուսակցական հակասություններ, բոլշևիկյան խռովություններ), ՏԻՄ-երի գործունեությունը եղել է շատ թույլ:

Լուսաբանվել է նաև Ա. Մելքոնյանի, Ն. Զաղեթյանի նախագահությամբ գործող Դիլիջանի գավառային վարչության արդյունավետ գործունեությունը, բոլշևիկյան ապստամբության հետևանքով գավառում ստեղծված անկայուն իրավիճակը[38]:

Ղարաքիլիսայի գավառային ինքնավարության մարմինները, մասնավորապես վարչությունը, հիմնականում սահմանափակվել է վիճակագրական գործունեություն ծավալելով՝ կենտրոնական իշխանություններին տեղեկացնելով կիսաքանդ գյուղերի, գաղթականների, դպրոցների, դպրոցահասակ երեխաների թվաքանակի և այլնի մասին[39]:

Ավելորդ չենք համարել անդրադառնալ նաև Չեզոք գոտում ինքնակազմակերպված ՏԻՄ գործունեությանը և վերջինիս հետ ՀՀ իշխանությունների հարաբերություններին[40]:

Եթե ՀՀ գավառային ինքնավարությունների ընտրություններում հիմնականում հանդես էին գալիս ՀՅԴ, ՀԺԿ, Սոցիալիստ հեղափոխականներ, ապա Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարության ընտրությանը ներգրված քաղաքական ուժերի ներկայացրած ցուցակները հանրապետության ՏԻՄ-երի պատմության մեջ առանձնացան իրենց ինքնատիպությամբ. ա. ընտրություններին չմասնակցեցին ՀԺԿ-ը և Սոցիալիտ հեղափոխականները, բ. բոլշևիկյան գավառային կոմիտեի որոշմամբ կոմունիստները հանդես եկան առանձին ցուցակով՝ թիվ 5, գ. թիվ 2 ցուցակը ներկայացնող «Շիրակ» Գյուղացիական միության իրավասուների թեկնածուների մեջ ևս ներառվեցին բոլշևիկների անուններ, դ. ՀՅԴ հանդես չեկավ մեկ միասնական ցուցակով[41]: Ընտրությունների արդյունքում, չնայած թույլ տրված ընտրախախտումներին, ընտրված 45 իրավասուների յոթը բոլշևիկներ էին:

---

[37] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 493, թ. 37-87:

[38] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 13-14:

[39] Նույն տեղում, գ. 250, թ. 53, գ. 482, թ. 227:

[40] Նույն տեղում, գ. 250, թ. 5-6, 16:

[41] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 443[1-ին], թ. 182, ֆ. 1021, ց. 4, գ. 127, թ. 152:

Ի տարբերություն վերոնշյալ գավառների՝ Նոր Բայազետի գավառային ինքնավարության ընտրություններն աչքի են ընկել ազգաբնակչության մասնակցության պասիվությամբ և աղաղակող ընտրակեղծիքներով[42]:

***ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝* «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»,** բացկացած է 3 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ԵՐԵՎԱՆԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», ընդհանուր գծերով անդրադարձ է կատարվել վերոնշյալ քաղաքների ինքնավարության մարմինների ձևավորմանը, վերակազմավորմանը և գործունեությանը:

Հանգամանալի լուսաբանվել են 1918 թ. դեկտեմբերի 15-ին կայացած Երևան քաղաքային խորհրդի ընտրությունները: ՀՀ գործող քաղաքական ուժերից սոց.-դեմոկրատները իրենց պաշտոնաթերթ «Կայծ»-ում անդրադառնալով նորանկախ հանրապետությունում դեմոկրատական սկզբունքներով անցկացվող առաջին ընտրությունների նշանակությանը՝ գրում էին՝ «Երևանի քաղաքային ընտրությունները քաղաքական ու հասարակական հսկայական արժեք ունեն թե՛ մեր՝ հայերիս, թե՛ օտարների աչքում», և դեռ ավելին՝ «Քվեների այս անարյուն պատերազմը նույնքան մեծ արժեք ունի մի ժողովրդի կյանքի համար, որքան թնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով մղած արյունահեղ պատերազմը»[43]: Ընտրությունների արդյունքում, ըստ ընտրական հանձնաժողովի հայտնած պաշտոնական տվյալների, ՀՅԴ ստացել էր 41 տեղ, ՀԺԿ՝ 14, էսէռները՝ 4, սոց.-դեմ. մենշևիկները՝ 1 տեղ[44]:

Այնուհետև, վեր են հանվել Երևանի քաղաքային իշխանության ձեռնարկած քայլերը սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ: Դրանք էին բնակչությանը կենսամթերքով ապահովումը, աշխատատեղերի ստեղծումը, քաղաքի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք ձեռնարկությունների՝ «Ամպեր»-ի, «Շուստով և որդիներ»-ի, ձիաքարշի մունիցիպալացումը[45]: 1919 թ. քաղաքային վարչությունը՝ քաղաքագլուխ Մ. Մուսինյանի նախագահությամբ, կարողացավ իր միջոցներով ձեռք բերել և բնակչությանը բաշխել 101 փ. շաքար, 173 փ. սոխ և այլն: Ինքնավարությունը կազմակերպեց օճառի, կաշվի, սառույցի, կտավի արտադրություն[46] և այլն:

Ենթագլխում ներկայացված է հանրապետության երկրորդ քաղաք Ալեքսանդրապոլի՝ թուրքական 1918 թ. տիրապետության շրջանում սոց.-դեմ. Լևոն Սարգսյանի գլխավորությամբ գործող քաղաքային ինքնավարության

---

[42] Մշակ, 13 հուլիս, 1920, Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., գիրք 2-րդ, Եր., 2012, էջ 267:

[43] Կայծ, 12 դեկտեմբեր, 1918:

[44] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 230, թ. 29, Կայծ, 26 սեպտեմբեր, 1918:

[45] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 153, թ. 15, Հառաջ, 18 հուլիս, 1920:

[46] Հառաջ, 13 հունվար, 1920:

պատմությունը, քաղաքի՝ ՀՀ միանալուց հետո քաղաքային խորհրդի և վարչության ձևավորման գործընթացը և դրա շուրջ ծագած նախընտրական և հետընտրական զարգացումները (արդյունքների վիճարկումը դատարանում), ինչպես նաև քաղաքային ինքնավարության գործունեությունը: Փաստական նյութերի հիման վրա ցույց է տրված, որ Ալեքսանդրապոլի վարչությունն իրեն լավագույնս է դրսևորել հատկապես կրթության ոլորտում: Քաղաքում գործել է 6 դպրոց, 1920 թ. փետրվարի 4-ից նաև՝ քաղաքային առաջին մանկապարտեզը[47]:

Մյուս կողմից վեր է հանված քաղաքային իշխանության բացթողումները, թույլ տրված ձախողումները, որոնցից էին քաղաքագլուխների շարունակ փոփոխումը, որի արդյունքում տուժում էր քաղաքային վարչության բնականոն աշխատանքները:

Ներկայացված է նաև Նոր Բայազետի քաղաքային ինքնավարության մարմինների ձևավորման գործընթացը, վերջիններիս գործունեությունը, որոնք, կարելի է ասել, հիմնականում սահմանափակվել են որոշումներ ընդունելով: Այսպես՝ 1919 թ. նոյեմբերի 29-ին խորհրդի որոշմամբ գյուղատնտեսական դպրոցին հատկացվեց շենք, հողատարածք, իսկ 1919 թ. դեկտեմբերի 6-ին՝ անվճար հիմունքներով տարածք տրամադրվեց նաև Կրթության նախարարությանը՝ թատերական շենքի կառուցման համար[48], խորհուրդը հաստատեց նաև մսի, հացի խանութների վերաբերյալ ծրագրեր, քննարկվեցին հասարակական աշխատանքների կազմակերպման, քաղաքի լուսավորության ապահովման, բնակարանային հարցի լուծման համար բռնագրավումների իրականացման ուղիները, մեթոդները[49]: Բայց այդ որոշումների մեծ մասը տարբեր պատճառներով չկենսագործվեցին:

Լուսաբանվել է Կարսի 1917-1918 թթ. քաղաքային մարմինների, մասնավորապես խորհրդի հակիրճ պատմությունը, ինչպես նաև 1919 թ. ՀՀ միանալուց հետո քաղաքային իշխանության նոր մարմինների ձևավորման, քաղաքային կյանքի բարելավմանն ուղղված վերջիններիս ձեռնարկած քայլերը՝ հացի բաշխում, ամբուլատորիայի բացում և այլն[50]:

Երկրորդ ենթագլխում՝ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ, ԱՇՏԱՐԱԿԻ, ՂԱՄԱՐԼՈՒԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԵՎ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ», ներկայացված է ՀՀ կենտրոնական իշխանության ջանքերը վերոնշյալ քաղաքներում ՏԻՄ համակարգի կայացման ուղղությամբ: Իրենց արդյունավետ գործունեությամբ առանձնացել են Վաղարշապատի և Աշտարակի քաղաքային ինքնավարությունները: Ի դեպ, Վաղարշապատի քաղաքային խորհուրդը ՀՀ ՏԻՄ-երից միակն էր, որտեղ ՀՅԴ չուներ բացարձակ մեծամասնություն, հետևաբար քաղաքագլուխ էր ընտրվել

---

[47] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2891, թ. 6, 15-16:

[48] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 451, թ. 2-7, 11:

[49] Նույն տեղում, թ. 3-5, 12, 20, Սոցիալիստ-դեմոկրատական, 10 նոյեմբեր, 1919:

[50] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 487, թ. 1, 13, 16 շրջ.:

էսէռների ազդեցության տակ գտնվող «Սոցիալիստական խմբակ»-ի ներկայացուցիչ Գարսևան Սլկունին[51]: Քաղաքային վարչությունը 1920 թ. մայիսին քաղաքային կտրոններով, ինքնարժեքից ցածր գներով հոգում էր 10 հազ. մարդու հացի կարիքները[52]:

Լուսաբանվել է Աշտարակի քաղաքային ինքնավարության սոցիալական քաղաքականությունը. անգրագիտության վերացման և կրթական կյանքի զարգացման համար խորհուրդը որոշեց իր ենթակայության տակ վերցնել «Պռոշյան» գրադարան-ընթերցարանը, դպրոցների վերաբացման համար կատարել բնակարանների բռնագրավումներ, 1919-1920 ուս. տարվա համար վերանորոգել տարրական դպրոցների շենքերը[53]: Ուշագրավ է, որ քաղաքային ինքնավարության որոշմամբ քաղաքային 2 դպրոցում ուսումը կազմակերպվել է անվճար:

Ներկայացվել են նաև Ղամարլուի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրացման աշխատանքները, դրանց իրականացման ճանապարհին արձանագրված հաջողությունները և ձախողումները:

Երրորդ ենթագլխում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ», ներկայացվել է Կովկասյան քաղաքների միության հակիրճ պատմության և դրանում հայ քաղաքական գործիչների՝ Ա. Խատիսյանի, Հ. Քաջազնունու, Հ. Օհանջանյանի ու այլոց դերակատարումը: Վերջիններիս, ինչպես նաև Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանի նախաձեռնությամբ 1920 թ. հունվարի 4-ին բացվեց Հայաստանի քաղաքների առաջին համագումարը, որով կյանքի կոչվեց ՀՀ Քաղաքների միությունը:

Վերջում լուսաբանվել է քաղաքների համագումարի 8 նիստերում քննարկված ՏԻՄ-ի հիմնախնդիրները, ընդունված բանաձևերի բովանդակությունը, որոնք վերաբերել են քաղաքային իշխանության տարբեր ոլորտների կառավարմանը: Վեր է հանվել այդ բանաձևերում ամրագրված ժողովրդավարական և առաջադիմական մի շարք գաղափարներ ու դիրքորոշումներ[54]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ համագումարի են բերված ատենախոսության հիմնական արդյունքները և եզրահանգումները: Ուսումնասիրելով Հայաստանի առաջին Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների (գավառային և քաղաքային) պատմությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

---

[51] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 44, թ. 51, 80:
[52] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 690, թ. 162:
[53] ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 309, թ. 1-2, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 8:
[54] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 530, թ. 6-8, 32-33:

ա) ՏԻՄ-երը հանդիսացել են նորանկախ հանրապետության պետական կառավարման համակարգի ու հանրային իշխանության իրականացման կարևորագույն միջոցներից (գործիքներից) մեկը: Դեռևս նոր՝ կազմավորման փուլում գտնվող կենտրոնական իշխանություններն ի զորու չէին միայնակ, առանց հասարակական լայն շերտերի մասնակցության և աջակցության բավարարել ազգաբնակչության կենսական պահանջները, ՀՀ վարչական տարածքներում կազմակերպել և վերականգնել՝ Հովի. Քաջազնունու բնութագրմամբ «անձև քաոս»-ի մեջ հայտնված տնտեսությունը, լուծել սոցիալ-տնտեսական խնդիրները: Տեղական և անգամ պետական որոշ խնդիրների (գործառույթների) փոխանցումը տեղական հանրույթների տնօրինմանը պետական տեսանկյունից պայմանավորված էր տեղական մակարդակով տվյալ հարցերի առավել արդյունավետ լուծման ապահովմամբ: Թե՛ հին՝ մինչև ՀՀ անկախության հռչակումը գոյություն ունեցող ինքնավարություններին, թե՛ նորաստեղծ ինքնավարություններին վստահվեց ՀՀ տարբեր բնակավայրերում փախստականների հետ առնչվող մի շարք խնդիրների լուծումը, հացի և այլ անհրաժեշտ կենսամթերքների ձեռքբերման գործընթացը, բժշկասանիտարական, կրթական կառույցների, ոստիկանության կառավարումը և այլն: Այս տեսանկյունից՝ անգնահատելի էր ՀՀ ՏԻՄ-երի դերը և նշանակությունը, որոնց հիմնական մասը՝ Երևանի քաղաքային ինքնավարությունը, Էջմիածնի գավառային ինքնավարությունը և այլն, հետևողականորեն կատարելով բարձրագույն իշխանության կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով սահմանված իրենց պարտավորությունները, կենտրոնական իշխանությունների համար դարձան հենարան, երկրի կայունության ապահովման, իրավակարգի ամրապնդման հենասյուն: Սակայն, հարկ է նշել, որ առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ իրադրությամբ պայմանավորված, երբեմն որոշ ինքնավարություններ, մասնավորապես Դիլիջանի, Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարությունները, ապակայունացնող իրադրություն էին ստեղծում իրենց գավառներում:

բ) ՀՀ և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանությունները տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովման համար ձեռնամուխ եղան համապատասխան իրավական և ֆինանսական երաշխիքների ստեղծմանը, որը ամրագրվեց օրենսդրորեն, ինչպես նաև ստեղծվեցին տարբեր հանձնախմբեր, որոնց նպատակն էր բարեփոխել, ժողովրդավարացնել ինքնավարությունների վերաբերյալ նախկին ռուսական օրենքները՝ ի նկատի առնելով մունիցիպալ կառավարման համաշխարհային փորձը: ՏԻՄ-երին առնչվող օրենքները, որոշումները վերաբերվում էին վերջիններիս ընտրություններին և իրավասություններին: Հարկ է նկատել, որ եթե 1918-1919 թթ. կենտրոնական իշխանությունների կողմից ընդունված ՏԻՄ-երի ընտրությունների վերաբերյալ իրավական ակտերում պահպանվեցին ժողովրդավարական սկզբունքները՝ ընդհանուր, ուղղակի, գաղտնի, հավասար ընտրություններ և այլն, ապա ՏԻՄ-երի իրավասությունները սահմանող ՀՀ

օրենքներում ինքնավարությունների խորհուրդները և վարչությունները զրկվեցին մի շարք գործառույթներից՝ միլիցիայի, բռնագրավման հանձնաժողովների ղեկավարման իրավունքից և այլ իրավասություններից, որոնք ամրագրված են եղել Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ընդունված ինքնավարությունների մասին կանոնադրություններում: ՏԻՄ-երի իրավունքների հաստատման համար կենտրոնական իշխանությունների դեմ մղվող պայքարում իրենց ակտիվ դրսևորեցին հատկապես Էջմիածնի և Երևանի գավառային ինքնավարությունները: Ի վերջո, թե՛ պառլամենտի, թե՛ բյուրո-կառավարության խնդրո առարկա հիմնահարցի առումով, կառուցողական քաղաքականության արդյունքում 1920 թ. ապրիլի 21-ին և հունիսի 5-ին հաստատվեցին ՏԻՄ-երի իրավասությունների վերականգման, ընդարձակման մասին օրենքներ, և ՏԻՄ-կենտրոնական իշխանություն հակասությունը մեղմացավ: Նշելի է, որ մինչև 1920 թ. հունիսի 5-ը՝ «Նախարարությունների որոշ ֆունկցիաներ գավառական ինքնավարություններին հանձնելու մասին» օրենքի հաստատումը, ըստ կարևորության, առանձին իրավական ակտերով մի շարք ինքնավարություններին, մասնավորապես Երևանի, Դիլիջանի գավառային ինքնավարություններին արդեն իսկ օժտել էին վերոնշյալ օրենքով նախատեսված մի շարք իրավասություններով: Այդ ամենը վկայում է, որ ինքնավարությունների իրավասությունների ընդլայնման քաղաքականությունը եղել է շարունակական և աստիճանաբար:

գ) Ակներև է, որ կուսակցությունները, մասնակցելով վերոնշյալ ընտրություններին, ձգտում էին գավառներում, քաղաքներում մեծացնել իրենց քաղաքական կշիռն ու ազդեցությունը, իսկ ընդդիմադիր ուժերն ինքնավարությունների միջոցով ձգտում էին ձեռք բերել կենտրոնական իշխանությունների քաղաքականությանը հակազդելու քաղաքական գործիքներ, և դրան հասնելու արդյունավետ ուղին գավառային և քաղաքային ինքնակառավարման մարմիններում՝ խորհուրդներում և վարչություններում, իրենց ներկայության ապահովումն էր: Իր հերթին պետական, քաղաքական գործիչների առաջնային նպատակը ՏԻՄ-երի միջոցով հանրապետության տարբեր բնակավայրերում, ժողովրդի կամքի համաձայն, սոցիալ-տնտեսական կյանքի կառավարումն ու կարգավորումն էր: Ի վերջո, հայ պետական, կուսակցական առաջադեմ գործիչները ձգտում էին երկրում իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ, հաստատել ժողովրդաիշխանություն, որի կարևորագույն մասնիկն է հանդիսանում տարածքային ընտրովի իշխանությունը:

դ) ՀՀ-ում ՏԻՄ-եր են ձևավորվել ու գործել հանրապետության վարչական տարածքի մեծ մասում՝ վեց գավառում և ինը քաղաքում: Մյուսներում՝ Կարսում, Սուրմալուում, Դարալագյազում, հնարավոր չեղավ դրանք արմատավորել՝ ռազմաքաղաքական, էթնիկ, սոցիալական և այլ պատճառներով: Վիճակն ավելի բարդ էր Նախիջևանում, Զանգեզուրում և

Արցախում: ՀՀ գավառային և քաղաքային ինքնավարությունների կազմը, ըստ ընտրությունների արդյունքների, հիմնականում բազմակուսակցական էր:

Հարկ է նկատել, որ տեղական խորհուրդներում ընդդիմադիր քաղաքական ուժերն ավելի շատ էին ընդգրկված, քան պառլամենտում. ՏԻՄ-երի ընտրություններին մասնացել և իրավասության տեղեր էին ապահովել անգամ այնպիսի հասարակական-քաղաքական ուժեր, որոնք պառլամենտում բացակայում էին: Սակայն, ինչպես և պառլամենտում, ՏԻՄ-երում ևս հիմնական ղեկավար քաղաքական ուժը ՀՅԴ-ն էր:

ե) Երկրի սոցիալ-տնտեսական ծայրաստիճան ծանր դրության, քաղաքական ուժերի, գործիչների՝ երբեմն ոչ կառուցողական քաղաքականանության դրսևորման, իրավական դաշտի անկատարության, կենտրոնական իշխանության թևերի իրավասությունների ոչ հստակ սահմանազատման, իշխանությունների ապակենտրոնացման ցածր մակարդակի առկայության, մունիցիպալ կառավարման համակարգում փորձառության պակասի, հասարակության ոչ բարձր իրավագիտակցության պայմաններում ՀՀ ձևավորված քաղաքային և գավառային ինքնավարությունների հիմնական մասը դարձավ պետական կառույցների ածանցյալ և նմանվեց պետական վարչական օրգանների: Երբեմն էլ նրանց գոյությունը դարձավ ձևական, ինչպիսին՝ Ղարաքիլիսայի քաղաքային և գավառային, Նոր Բայազետի գավառային ինքնավարությունները: Առավել արդյունավետ գործունեություն ծավալեցին Էջմիածնի, Երևանի գավառային, Երևանի, Ալեքսանդրապոլի, Վաղարշապատի, Աշտարակի քաղաքային ինքնավարությունները:

զ) Եթե քաղաքային ինքնավարությունները համեմատենք գավառային ինքնավարությունների հետ, ապա կտեսնենք, որ առաջինների գործունեությունն առավել արդյունավետ էր: Դա պայմանավորված էր նրանով, որ ա. հայ իրականության մեջ քաղաքային ինքնավարությունները նորույթ չէին, և քաղաքների կառավարման բնագավառում արդեն իսկ կային ձևավորված ավանդույթներ, մշակույթ, բ. քաղաքներում էր կենտրոնացված մտավորականությունը, կուսակցական ակտիվ ուժերը, որոնք էլ իրենց մասնակցությամբ նպաստում էին ինքնավարության մարմինների ձևավորմանը, կայացմանը, ամրապնդմանը: Հարկ է նշել, որ կիրթ և ունակ ուժերի սակավության հետևանքով երբեմն միևնույն անձը միաժամանակ հանդիսանում էր և՛ գավառային, և՛ քաղաքային խորհրդի իրավասու, բացառությամբ Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքների, որոնք չընդգրկվեցին համապատասխան գավառների վարչական սահմանների մեջ: Ի դեպ, նորաստեղծ քաղաքներում խորհուրդների ընտրությունները կազմակերպվեցին ավելի վաղ (1919 թ.), քան գավառային խորհուրդների ընտրությունները, որոնք հիմնականում տեղի ունեցան 1920 թ.:

է) Պատերազմը, հիվանդությունները, սովը ազգաբնակչության մոտ առաջացրել էր բարոյահոգեբանական ծանր վիճակ, հետևաբար համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքի կազմակերպման, տնօրինման

գործընթացներում բավականին փոքր էր: Ակներև է, որ վերջիններս, երկար ժամանակ անհաղորդ մնալով ժողովրդավարական արժեքներին, չունենալով անհրաժեշտ իրավագիտակցություն, պատկերացում չունենալով ՏԻՄ-երի, դրանց գործունեության նշանակության մասին, հիմնականում չէին նպաստում հանրային կյանքի զարգացմանը:

ը) ՏԻՄ-երի գոյությունը մեկ անգամ ևս վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունը, իր պատմաշրջանին բնորոշ թերություններով հանդերձ, եղել է **կազմակերպված պետություն**, որը կառուցվել է տվյալ պատմական ժամանակաշրջանի ժողովրդավարական արժեհամակարգի հիման վրա:

թ) Հայաստանի առաջին Հանրապետության ՏԻՄ-երի պատմության փորձն ու դասերը ուսանելի կարող են լինել մեր ժամանակների Երրորդ հանրապետության ՏԻՄ-երի՝ արդեն նոր պահանջներով ու հրամայականներով ձևավորման ու կայացման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ասատրյան Ա., Էջմիածնի գավառային ինքնավարությունը 1920 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2010, N 2 (116), էջ 185-190:
2. Ասատրյան Ա., Երևանի քաղաքային ինքնավարությունը 1918-1920 թթ., «Հայագիտական հանդես» Երևան, 2011, N 1 (15), էջ 104-118:
3. Ասատրյան Ա., Հայաստանի կառավարության քաղաքականությունը տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և ամրապնդման հարցում (1918-1920 թթ.), «Գիտական հոդվածներ», Վանաձոր, 2011, էջ 219-230:
4. Ասատրյան Ա., Հայաստանի պառլամենտի քաղաքականությունը տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և ամրապնդման ուղղությամբ (1918-1920 թթ.), «Կանթեղ», Երևան, 2012, 4 (53), էջ 179-184:
5. Ասատրյան Ա., ՀՀ կենտրոնական իշխանությունների օրենսդրական նախաձեռնությունները տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և ամրապնդման ուղղությամբ (1918-1920 թթ.), «Ազգ, պետություն, հայրենիք, պետականություն. պետականության գաղափարը», Երևան, 2012, էջ 6-9:

АСАТРЯН АННА ЭДИСОНОВНА

ОРГАНЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ (1918-1920 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 24-го июня 2014 года в 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Изучение истории органов местного самоуправления первой Республики Армении имеет важное и актуальное значение не только в установлении целостности истории первой республики, но его опыт может быть полезным с точки зрения развития системы местного самоуправления третьей республики Армении. В данной диссертации представлены формирование и деятельность органов местного самоуправления в первой Республике Армении.

Диссертация состоит из введения, 3 глав, заключений и списка использованных источников и литературы.

Во введении обоснована важность и актуальность, цели и задачи, методика работы, научная новизна, использованы теории источников и литературы.

В первой главе диссертации - «Шаги центральных властей к формированию и укерплению органов местного самоуправления», представлены юридические акты (законы, решения), принятые правительством и парламентом, на основе которых сформировались органы местного самоуправления.

Эти законы в основном относятся принятия законов об организации выборов в органы местного самоуправления, процессу функционирования, результатам, денежным премиям, выдаваемым органам местного самоуправления, реформам законов, касающимся органов местного самоуправления, земствам и расширению полномочий городского суверенитета, муниципализации разных организаций и т. д. Так, 23-го мая 1919 года были утверждены два важных закона “Об основании земских учреждений в нескольких областях РА” и “О внесении городского законодательства в нескольких местах РА”, а 5-го июня 1920 года правительством был утвержден закон “О передаче

некоторых функций от министерств областным органам самоуправления (земствам)". Согласно вышеуказанному закону, были расширены полномочия последних. Мы представили также точку зрения мэра г. Еревана - Мктрича Мусиняна, об управлении городами, основанную на децентрализации муниципального управления.

Во второй главе диссертации - «Земства в Республике Армения», мы обратились к выборам в органы местного самоуправления, в ряде округов Армении, нарушениям при выборах, деятельности земств. Областные органы самоуправления наилучшим образом функционировали в областях городов Еревана и Эчмиадзина, где по инициативе органов местного самоуправления и при государственной поддержке, были открыты больницы, столовые и другие, жизненно важные учреждения. В результате эффективной деятельности органов местного самоуправления стало возможным в некоторой степени уладить тяжелое социальное положение. Деятельность областных органов местного самоуправления Дилижана, Александрополя, Нового Баязета, была очень слабой.

В третьей главе диссертации - «Городское самоуправление РА», также была представлена организация выборов в ОМС в ряде городов РА, достижения и недостатки в сфере управления городов, процесс создания «Союза городов Армении».

На выборах Ереванского государственного совета, состоявшихся 15-го декабря 1918 года, большинство голосов получила Армянская Революционная партия (Дашнакцутюн). Городское самоуправление нуждающимся семьям бесплатно предоставляло хлеб, сахар и другие продукты. Благодаря самоуправлению, было организовано производство мыла, кожи, следовательно, были созданы новые рабочие места.

Городское самоуправление Александрополя с лучшей стороны проявило себя в области образования.

Были представлены также шаги, предпринятые органами городского самоуправления Нового Баязета, Карса, Гамарлу, Дилижана, Харакилисы, направленные на улучшения городской жизни (вопрос о вынесении мусора, городском освещении, чистки этажей, ремонтных работах улиц).

В заключении изложены основные итоги и выводы исследования.

ASATRYAN ANNA EDISON

THE LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on the 24th of June, 2014, 14 00 at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4):

SUMMERY

The study of the history of the local SGB-ies in the first Republic of Armenia has an important scientific and contemporary meaning not only to complete the history of the First republic, but, also, the experience it had, can be useful for the development of the SG system of the Third republic is presented in the following thesis.

The thesis consists of the introduction, three chapters, the summary and the list of the sources and literature used.

The introductory part states the importance and the contemporary meaning of the thesis, its aim and problems, the methodology of the work, the scientific novelty. The theory of the used sources and literature is also presented here.

The first chapter of the thesis is named "The attempts of the Central Authorities in forming and strengthening the local self–goverment bodies (1918-1920)". The juridical acts (laws, decisions) adopted by the Parliament and the Government are presented here. Based on these acts the local self–government bodies were formed.

These laws mainly include the adoption of laws about the organization of elections to local self-government bodies, the process of their operation, results, cash allocations issued to some local self-government bodies, reforms of laws, relating to local self-government bodies, local boards and the empowerment of urban sovereignty, municipality of various organizations, etc.

Thus, in the 23rd of May, 1919 it were approved two important laws "About foundation of provincial institutions in several areas of the Republic of Armenia" and "About establishing of urban legislation in several places of the Republic of Armenia", and in the 5th of June of 1920 the Government approved the law "About the transfer of

certain functions from the ministries to the provincial self-government bodies." According to the above mentioned law, the powers of the last were extended. We also presented the views of the mayor of Yerevan-Mktrich Musinyan about urban governance based on decentralization of municipal management.

The second chapter of the thesis is named "The Provincial self–government bodies in the Republic of Armenia". Here we have referred to the elections of the local self–government bodies, violations in the elections, the activities of the local self – governent bodies in a number of regions.

Provincial self-government bodies functioned well in the areas of the cities of Yerevan and Echmiadzin, where by the initiative of local governments and with public support, were opened hospitals, canteens and other institutions. In the result of the effective performance of local self-government bodies it became possible to resolve the difficult social situation. The activities of provincial self-government bodies of Dilijan, Aleksandrapol, New Bayazet, was very weak.

The third chapter of the thesis is called "The municipal self–government bodies in the Republic of Armenia". Here we presented the organization of the elections of the local self –government bodies in a number of cities, the success and failures of the municipal bodies in the field of municipal government, the process of creating "The Union of Armenian cities".

During the elections of Yerevan State Council, held on 15 December, 1918, the majority of the votes received Party of Armenian Revolutionary Federation (Dashaktsutyun). Municipal government provided free bread, sugar and other products to needy families. Municipality organized the production of soaps, skin, created new jobs.

Municipal government of Aleksandrapol manifested itself especially in the sphere of education.

Also there represented the steps taken by the authorities of municipal government of New Bayazet, Kars, Ghamarlu, Dilijan Gharakhilisa aimed at improving of urban life (the question of garbage, urban lighting, cleaning floors, street improvement).

The main findings and results of the study are summarized in the conclusion.